

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ

ՄԻՆՁՆԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ*

ԳԼՈՒԽ Գ.

ՍԵԼՃՈՒՔԵԱՆ ՄԵԾ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Տուրքի Բէկ Հայաստանի մէջ - Տուրքի Բէկը խաղի եկած - Յարձակում կարսի վրայ - Մանագ-կերտի ազատումը - Տուրքի Բէկի անփառունակ նահանգը - Տուրքի վրէժը - Ապուսարի աւերումները - Կայսրութեան տկարութեան պատճառները:

ՏՈՒՂՐԻՒ ԲԵԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Երբ Իբրահիմ Ինալ հայկական հողը ա-բիւնով կը ներկէր՝ Սուլթան Տուրքի Բէկը, որ Պարսկաստանի մէջ յաջողութենէ յաջողութիւն կը քալէր, լրջօրէն ծրարեց Բիւզանդական տիրապետութեան հետքը ջնջել, բանալու համար Փոքր Ասիոյ ճա-նապարհը:

Սուլթանը, 1045ին, անհամար զօրքով, փիղերով, կառքերով, պատերազմական պէսպէս մեքենաներով, կիներով, որդի-ներով եւ ռազմական մեծ պատրաստու-թեամբ մտաւ Վասպուրական աշխարհը¹: Անոր առաջին զոհն եղաւ Բերկրի քաղա-քը, Վանայ ծովակին հիւսիս արեւելեան

* Ինչպէս ծանօթ է մեր ընթերցողներուն, 1946ին սօցիէն, մեր սիրելի ողբացեալ պատմադէտը՝ Հ. Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեան, կը վերա-մշակէր ու քննական մտղէ կ'անցընէր Հայոց Պատմութեան նուիրուած իր հարիւրաւոր տե-տրակները, հետզհետէ հրատարակութեան տա-լով «Բազմալէզ»-ի էջերուն մէջ:

Հանդուցեալին տետրակներէն յարմար նը-կատեցինք հրատարակել Սելճուքեան արշա-ւանքներու մասը, շարունակելու եւ ամբող-

անկիւնը: Սելճուքներու պետը քաղաքը պաշարումով առաւ եւ անոր իշխանները չզթալի զարկած գերի տարաւ: Անկէ դի-մեց Տուրքերեան նահանգի Ապահունեաց գաւառը, եւ բանակը դարկաւ Մանազկեր-տի մօտ: Այդ քաղաքը Բիւզանդացիներ-ուն ամէնէն հզօր բերդաքաղաքն էր, ան-մատոյց ու անառիկ, չըջապատուած եր-բեակ պարիսպներով: Բնակչութեան մեծ մասը կը կազմէին հայերը եւ ապա սակա-ւաթիւ յոյներ: Բնակիչները քաղաքին ամրութեան վրայ ապահով, վստահ էին անոր պաշտպանութեան, բայց բաւակա-նաչափ պաշար չունէին:

Սակայն իրենց բախտէն, Սուլթանը բերդաքաղաքին արտաքին տեսքէն սար-սափած՝ հասկցաւ թէ պաշարումով անոր տիրելու համար շատ ժամանակի պէտք պիտի ըլլար: Եւ որովհետեւ իր բանակը բռնէր էր ընդարձակ դաշտավայրերը, անկարելի կը դառնար միակ վայրի մը մէջ կերակրել բազմաթիւ զուգեր եւ ա-նոնց ոռճիկ ճարել: Տուրքի Բէկ կ'ընձիւր չուտով լուծեց: Անիկա իր բանակը չորս զուգերու բաժնեց, որոնցմէ երեքը զըր-

ջացնելու համար արդէն իսկ սկսեալ յօդ-ուածաշարք մը:

Յօդուածաշարքին նախորդ մասերը տե՛ս Բազմալէզ 1946, էջ 158-162, 205-209, 208-262, 1950, էջ 14-19, 131-134, 160-167:

ԽՄԲ.

- 1 Հմմտ. Ա. Լաստիվերացի, Պատմութիւն, Վե-նետ, 1844, գլ. ԺԶ, էջ 62: Մ. Ուռաշիցի, Պատմութիւն, Երուսղ, 1869, Բ. էջ 140:

կեց՝ Հայաստանի երեք կողմերը. հիւսի-սէն դէպի Ափղաղիստանի բերդաքաղաք-ները մինչեւ Պարսար լեռը եւ մինչեւ Կուլ-կասի ստորոտը. արեւմուտքէն մինչեւ Լա-զիստան. եւ հարաւէն մինչեւ Սիմ լեռը, որ է հայկական Անտի Տաւրոսը²:

Այդ երեք զուգերը մարախներու պէս տարածուեցան Հանձիթ, Խորճեան, Խաղ-տիք եւ Բարձր Հայք գաւառներու ալիւ-ալ կողմերը, ուր բազմաթիւ հայեր ա-պաստանէին, այդ վայրերու բնական ամրութեանց վստահացած: Հրոսները զանոնք հետապնդեցին մինչեւ անտառնե-րու եւ քարանձաւներու խորը եւ սարսա-փելի կոտորած մը ըրին³: Անոնք թափան-ցեցին նաեւ Դերձան եւ Եկեղեաց գաւառ-ները, ուր գործեցին աւերումներ եւ կո-տորածներ:

Հայրենատէր Լաստիվերացին, ականա-տես պատմիչը, սրտաշարժ դրչով կը պատկերացնէ թուրքերուն գործած ոճիւ-րները հայկական գաւառներու մէջ:

«Այդ գայնը ժամու չարիս գոր նոքա աշխարհիս հասուցին ո՞վ կարէ ընդ գրով արկանել կամ ո՞յր միտք բաւեն ի համար անիւ. զի ամենայն աշխարհս ի էր դիա-կամբք, շէնք եւ անշէնք, անապարհք եւ անապարտ տեղիք, քարանձաւք եւ առա-պարք, անտառախիտ մայրիք եւ անփա-յայ վայրք եւ յամենայն շինանիստ տե-ղիս հուր հարեալ ապականեցին գոռուս եւ գեկեղեցիս, որոց բոց հրահատին առաւել բարձրանայր քան զհնոցն Բաբելոնի: Եւ այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս մեր ոչ միանգամ, այլ երիցս անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ, մինչեւ առ հասարակ հատաւ երկիրս ի բնակչաց եւ բարձաւ կառաչ անասնոց...:

Յորժամ յիշեմ որ ինչ ի նոսա գործե-ցաւ հատկիւն արտասուօք, փղձկի սիրտ իմ եւ յիմարին միտք իմ, և գոռանի հար-կանի ձեռքս եւ ոչ կարեմ գոն տողին յա-ռաջ խաղացուցանել⁴:

Աններելի չարիք մըն ալ այն էր՝ որ մինչ Հայաստան քարուքանդ եղած, ցա-ւալի եւ ողբալի կացութեան մէջ էր, յոյ-ներն եւ ոչ իսկ կը մտածէին՝ նոյն իսկ ի-րենց սեփական մօրթին չահուն համար՝ բարբարոսներու հեղեղը կասեցնելու: Միայն երբ ասպատակողները Խաղտիքը կողոպտած եւ աւարով ձորոխ մեծ գետի ափերով հասան Բարբերդի մօտ, կայսերա-կան բանակէն ջոկատ մը, բաղկացած փրանկներէ⁵, հրոսախումբին մարտի հրա-ւէր կարգալով ստիպեց զայն կանոնաւոր ճակատ յարդարելու: Ճակատամարտին մէջ Փրանկները սպաննեցին սելճուք զօ-րապետը եւ թշնամի զուգերին յաղթելով՝ հարածեցին զայն, ետ խլելով անկէ աւա-րը եւ հայ գերիներու բազմութիւնը⁶:

ՏՈՒՂՐԻՒ ԲԵԿ ԽԱՂԻ ԵԿԱԾ

Մինչ Սելճուքեան երեք զուգերը Հա-յաստանի գաւառները կ'աւերէին ու կ'ա-ւարէին, կը կողոպտէին ու կը յափշտա-կէին, կը ջարդէին ու կը կոտորէին, կը գերէին ու կը գերիէին, անդին Տուրքի Բէկը չորրորդ զուգը իր հետ առնելով՝ դացեր էր Տուարձատափի գաւառակը, գետեղուած Բասենի հարաւակողմը, վե-րին Երասխի եւ Արածանի միջեւ: Անկէ իջեր էր Բասենի ընդարձակ դաշտը՝ նը-պատակ ունենալով կարինը գրաւելու փորձ մը ընել: Բայց չուտով հասկցեր էր որ այդ ձեռնարկը զժուար է: Նա առաջ երթալով հասեր էր Աւանիկ անառիկ ամ-րոցը, ուր ապաւիններ էին գաւառին բոլոր

2 Հմմտ. Ա. Լաստիվերացի, անդ:

3 Հմմտ. Ա. Լաստիվերացի, Գլ. ԺԶ, էջ 63:

4 Ա. Լաստիվերացի, Գլ. ԺԶ, էջ 63-64:

5 Այս շրջանին Նորմանդացի զուգ մը, մեր ազգային պատմիչներէն կոչուած «Փոռնոք», կը ծառայէր բիւզանդական բանակին մէջ, իբրեւ

վարձկան զինուորներ, որոնք ըլլալով յան-դուղն ու բախտախնդիր մարդիկ, այդ բա-նակին աչքի դարձող ոյժերն էին:

6 Հմմտ. Ա. Լաստիվերացի, Պատմ. Գլ. ԺԶ, էջ 65:

մարդիկն ու անասունները⁷։ Ան չէր համարձակած անոր վրայ յարձակելու եւ առաջ անցնելով մտեր էր Բասենի հիւսիս արեւմտեան սահմանները, Դու զիւղին մօտ, Կարինի հիւսիս արեւելեան կողմը, ուրկէ կարելի էր զիտել Կարինը։ Տուղրիլ Բէկ քաղաքը երկար զիտելէ յետոյ՝ վերջնականապէս համոզուեց էր որ այդ բերդը բոլորովին անառիկ է⁸։ Այսպէս ժամանակ տալով որ Մանազկերտի բնակիչները ուժեղանան։

Տուղրիլ Բէկ Բասենի կողմերէն ետ դառնալով՝ կողոպտեւ էր շատ մը տեղեր։ Վերստին մտեր էր Վասպուրական աշխարհը, եւ դաքեր պաշարեր էր Արճիւհանովիտ գաւառի Արճէշ մեծ քաղաքը⁹, ութը օր սաստիկ պատերազմ մղելով անոր դէմ, բայց չէր կրցած գրաւել զայն։ «Քաղաքացիները, կ'ըսէ Ուռհայեցի, մէկ կողմէն թշնամի բանակին բազմութենէն սարսափած, եւ միւս կողմէն ձանձրացած» որոշեցին կաշառել սելճուք սուլթանը։ Անոնք ժողովեցին բազմաթիւ ոսկի, արծաթ, ձիեր եւ ջորիներ, զանոնք ներկայացնելով սուլթանին՝ աղաչեցին, պաշտօնեցին որ ընդունի իրենց սիրոյ հրահանգութիւնը՝ ըսելով. «Ո՛վ աշխարհակալ սուլթան, երթ եւ առ զքաղաքն Մանճկերտ, եւ յայնժամ մեք եւ ամենայն աշխարհն Հայոց մտցուք ի ծառայութիւն»¹⁰։ Այս խօսքերը հաճոյ անցան սուլթանին, որ իր բանակը վերցնելով՝ ուղղակի դիմեց Մանազկերտի վրայ, առանց կասկածելու թէ խաղի եկած է։

ՅԱՐԱՅԱԿՈՒՄ ԿԱՐՍԻ ՎՐԱՅ

Երբ սելճուք սուլթանը իր աւերումները կը դործէր, տուղրիլեան երեք զունդերէն մեծագոյնը հեղեղի պէս տարածուեցաւ Արարատեան աշխարհին մէջ, ու շատ մը տեղեր փճացնելէ, բազմաթիւ գերիներ

ձեռք անցընելէ վերջ՝ մտաւ Վանանդ դաւառը։

Այս անգամ Գաղիկ Աբասեան Կարսի թագաւորը, առաջին օրինակէն խրատուած, կրցաւ իր շուրջը հաւաքել քաջազուն հայ իշխանները, որոնք իրենց վաշտերով Սելճուքներու դէմ ճակատեցան։ Անոնք թէեւ թշնամիներու շարքերուն մէջ «ահագին կոտորած ըրին»¹¹, բայց երբ պատերազմը երկարեցաւ, Սելճուքները չըջապատեցին հայ թագաւորն ու անոր իշխանները։ Եւ որովհետեւ ասոնք յոգնած էին, ինչպէս իրենց ձիերը, չկրցան իրենցմէ շատ աւելի բազմաթիւ թշնամիներուն պատնէշը պատուել, անկէ դուրս ելլելու համար։ Այս ճակատամարտին մէջ կորսուեցան երեսուն հայ իշխաններ¹², իսկ ուրիշներ գերի ինկան։ Բայց հայերը, հակառակ իրենց յոգնած վիճակին, հաղարաւոր սելճուքներ գետին փռեցին, անոնց շարքերուն մէկ կողմը պատուեցին եւ աղստեցան։

ԹԱԹՈՒԼԻ ԽՐՈԽՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Այս գերիներէն մէկն էր Թաթուլ Վանանդացի, կտրիճ երիտասարդը, Գաղիկ թագաւորի սպարապետը եւ հայկական բանակին զարդը, որուն վրայ թշնամիները զայրոյթի կատաղութիւն կը զգային, որովհետեւ ճակատամարտին մէջ ծանր վէճք ստացած էր Սուլթանին մտերիմ բարեկամի մը՝ Ասուրան էմիրի որդին. եւ կը կարծուէր թէ Թաթուլէն վերաւորուած է։ Թաթուլ տարուեցաւ Տուղրիլի առջեւ, որ նոր հասեր էր Մանազկերտի սահմանները։ Սուլթանը ցոյց տալով վերաւորուած պատանին, ըսաւ Թաթուլին. «Եթէ ասիկա ապրի, քեզ կ'աղատեմ. իսկ եթէ մեռնի՝ կը հրամայեմ որ քեզ անոր մատաղ ընեն»։ Թաթուլ հանդարտութեամբ, բայց խորխտաբար պատասխա-

նեց. «Եթէ իմ է զարկածն, չէ կենաց. թէ այլու՞մ է՝ զայն ոչ գիտեմ»¹³։ Երբ քիչ վերջ Սուլթանը պատանիի մահուան գոյժըն առաւ, հրամայեց Թաթուլը սպաննել, եւ անոր աջ բազուկը կտրել տալով զրկեց Ասուրանին, այս միջթարական խօսքերով. Որդիդ չմեռաւ վատ բազուկէ, այլ այնպիսիէ մը, «որուն զարկածն չէ սպրանաց»¹⁴։

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՊԱՏԱՐՈՒՄԸ

Տուղրիլ Բէկը արագօրէն շարժելով, հասաւ Մանազկերտ քաղաքին առջեւ, եւ «էր, ինչպէս կ'ըսէ Ուռհայեցի, որպէս զօճ լցեալ ամենայն չարութեամբ»¹⁵։ Սուլթանը պատճառներ ունէր օձի պէս չարանալու։ Անիկա հասկցեր էր որ քաղաքացիները, իր բացակայութենէն օգտուելով, կրցեր էին հացի եւ կենդանիներու պաշարով լեցնել բերդաքաղաքը, քանի որ հունձքի ժամանակ էր։ Բայց ինչ որ Սուլթանին ատամները կրճտել կուտար՝ իր գործած մեծ սխալն էր։ Այժմ անիկա անդադարձեւ էր որ եթէ ինք չտապած չըլլար Մանազկերտէն հեռանալով՝ բերդաքաղաքը, ինչպէս կը հաւատացնէ Լաստիվերտցին, տասը օրէն աւելի չէր զիմանար¹⁶։

Երբ Տուղրիլ Բէկի միւս երեք զունդերը հասան Մանազկերտի բերդին տակը, Սուլթանն իր սխալը ուղղելու համար, ծրագրեց զործածել իր բոլոր ոյժերը ու այս անգամ անպայման բերդը գրաւել։ Բայց անիկա զաղափար չունէր որ իր հեռանալէն վերջ՝ Մանազկերտցիները յայտնապէս դուշակած ըլլալով թէ սելճուք ահարկու պետը իր սատակիչ սուրը օր մը իրենց վրայ պիտի դարձնէ, բերդն ուժեղացուցած էին նաեւ դէնքերով ու նոր զինուորներով։

Բախտն ուրիշ բարիքով մըն ալ օժտեւ

էր այդ անառիկ բերդը։ Անոր իշխանն էր Վասիլ, որդի Ապուքապի, Տայոց աշխարհէն, հօր կողմէ հայ, եւ մօր կողմէ վրացի. «Այր բարի եւ աստուածապաշտ», զոր Մոնոմախոս կայսրը վերակացու եւ կուսակալ կարգեր էր Ապահունեաց դաւառին¹⁷։ Ասիկա քաջարի զօրական մըն էր եւ փորձուած զօրապետ մը, որ իսկապէս կացութեան մարդն էր։ Իսկոյն բերդն աւելի եւս ամրացուցեր էր, զինուորադրեր էր բոլոր քաջասիրտ մարդիկն ու կիները։

Սուլթանը անմիջապէս հրաման տուաւ պարիսպը շրջապատել եւ եռանդով սկսիլ պատերազմական դործողութեանց։ Անիկա իր վրանը զարկեր էր քաղաքին դիմաց, տեղ մը որ Քարագլուխ կը կոչուէր։ Երկու օր վերջ, առաւօտեան դէմ, Սուլթանը հրամայեց հնչեցնել պատերազմական բոլոր պղնձի փողերը եւ միաձայն պոռալ, որով տեղի կ'ունենար ահագին զոռում-դոչում մը, որ պարիսպները կը դողացնէր¹⁸։ Ասոր փոխարէն՝ Վասիլ իշխանը, բերդակալներու ընդդիմութեան ոգին արծարծելու համար, կայսեր կողմէ ամէնուն փառք եւ իշխանութիւն կը խոստանար. եւ եկեղեցականներուն ալ պատուէր կու տար որ անդադար աղօթեն։ Իսկ ինքը զիշեր ցերեկ չէր զադրեր քաջալեր ու խրախոյս կարգալէ ժողովուրդին՝ որ չվախնան եւ յոյսերին ալ Աստուծոյ վրայ դնեն¹⁹։

Յիրաւի ժողովուրդը, կոչնակը հնչելուն, խաչով միասին պարիսպներու վրայ ելած՝ Աստուծոյ բարձրաձայն օգնութիւն կը ինդրէր վտանգուածներուն համար։ «Այս ձայները, կ'ըսէ Լաստիվերտցին, բռնաւորին ահանջները ծանրացուցին, այնպէս որ անիկա հարցուց թէ ինչ է այդ անընդհատ աղաղակը. գիտուններն իրեն հասկցուցին թէ Աստուծոյ կ'աղաղակեն»²⁰։

13 Ա. Լաստիվերտցի, անդ։

14 Ա. Լաստիվերտցի, անդ։

15 Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 141։

16 Ա. Լաստիվերտցի, Պատմ. Գլ. ԺԶ, էջ 67։

17 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 142, եւ էջ 556 ծան. Թ. 96։

18 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 141։

19 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 142։

20 Ա. Լաստիվերտցի, Պատմ. Գլ. ԺԶ, էջ 68։

7 Հմմտ. Ա. Լաստիվերտցի, Պատմ. Գլ. ԺԶ, էջ 67։

8 Հմմտ. Լաստիվերտցի, անդ։

9 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 140։

10 Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 141։

11 Ա. Լաստիվերտցի, Պատմ. Գլ. ԺԶ, էջ 66։

12 Հմմտ. Ա. Լաստիվերտցի, անդ։

Տուղրիլ Բէկի ամբողջ ամիս մը պատե-
րազմական զործողութիւնները շարու-
նակեց, օրն երկու անգամ յարձակում
զործելով բերդին վրայ. բայց բերդակա-
ները քաջութեամբ դէմ կը դնէին, մանա-
ւանդ որ փրանկ մը՝ տեղեակ պատերազ-
մի բազմադէմ հնարքներու, եւ որ շատ
մը բաներու մէջ Վասիլի օգնական էր,
թշնամի բանակին շատ մը հնարքները կը
փճացնէր²¹: Միւս կողմէ, տարիքոտ հայ
քահանայ մը, պատերազմական արուես-
տին հմուտ, Տուղրիլ Բէկի քարածիւղ մե-
քենային դէմ հնար մը գտեր էր: Անիկա
չինքն էր աւելի կատարեալ քարընկէց մե-
քենայ մը, կարող մեծամեծ քարեր նետե-
լու: Երբ թշնամին իր մեքենային պար-
սատիկներու վրայ քար դրած բերդին վը-
րայ կը նետէր, հեռաւոր նմանութիւն տա-
լով ալփման թնդանութիւն, քահանայ
իր քարը ուղղակի թշնամի քարին դէմ
կ'արձակէր, այնպէս որ քարը զարմանա-
լիօրէն դպչելով թշնամի քարին՝ թշնա-
միներու վրայ կը նետէր: «Անօրէնները,
կ'ըսէ Լաստիվերտցին, եօթն անգամ այդ
բանը կրկնեցին, բայց բան մը չկրցան ը-
նել՝ վասնզի երէցին քարը անոնց քարին
վրայ զօրացաւ»²²:

Սուլթանը ճարահատ հրամայեց ական-
ներ բանալով պարսպին մօտենալ եւ անոր
հիմը փորել: Այս խորհուրդն իրեն տուեր
էր իր աները, կոչուած Ոսկեծամ²³, որ
այդ զործին վերակացու կարգուեցաւ այդ
բանին տեղեակ ըլլալով: Բայց այդ փործն
ալ անյաջող անցաւ. այդ ճախողութեան
մեծ չափով նպաստեց հանդամանք մը:
Տուղրիլ Բէկի մտերիմ իշխաններէն մէկը,
որ գիտէր պատերազմական զործողու-
թիւններու բոլոր ծրագրերը, եւ որ սա-
կայն ծածուկ թշնամութիւն մը կը սնու-
ցանէր Բէկին դէմ, պաշարուածներուն
օգնելու գիտաւորութեամբ՝ Սուլթանին

խորհուրդները անոնց կ'իմացնէր կամ
խօսքով կամ գրով: «Շատ անգամ, կը գրէ
Լաստիվերտցին, մաղաղաթի վրայ կը
դրէր եւ նետին ծայրը կապած՝ պարսպէն
ներս կը նետէր եւ քաղաքացիներուն կ'ի-
մացնէր թէ այսօր ո'ր կողմը պիտի շար-
ժին, կամ քաղաքին ո'ր կողմը ական պի-
տի բանան, քաղաքը մտնելու համար.
բայց դուք - կ'ըսէր - քաղաքացիներուն,
պինդ եւ ամուր կեցէք եւ տեղերուն վրայ
զդուութիւն ըրէք»²⁴: Քաղաքացիները
ասկէ խրախուսուած՝ իրենք ալ ականներ
բացին թշնամի ականներուն դիմաց, եւ
հասան բռնեցին բոլոր անոնք որ ականներ
փորելու զբաղած էին: Ձերբախլուածնե-
րու մէջ էր նաեւ Տուղրիլ Բէկի աները,
Ոսկեծամը: Անոնք հանուեցան պարսպ-
ներուն վրայ եւ գլխատուեցան եւ գլուխ-
ները նետուեցան Սուլթանին առջեւ՝ նա-
խատելու համար զինքն ու իր բանակը²⁵:

Ասոր վրայ Տուղրիլ Բէկի սաստիկ կատ-
ղեցաւ եւ որոշեց զինքն մեծ մեքենայի մը
օգնութեան: Խումբ մը զինուորներ զրկեց
Բիզնուսեաց դաւառի Բաղէշ քաղաքը, որ
այդ ժամանակ իր իշխանութեան ներքեւ
էր, որպէսզի անկէ բերեն այդ զործիքը
զոր Վասիլ Բ. հայկազն կայսրը շինել
տուեր էր, եւ որ Սելճուքներու ձեռքը ան-
ցեր էր: Ասիկա ահագին մեքենայ մըն էր,
որուն պարանները, ինչպէս կը վկայէ
Լաստիվերտցին, կը քաշէին չորս հարիւր
հողի, եւ կը կոչուէր Բաքաւ, այս զոր-
ծիքը վաթսու լիտր ծանրութեամբ քար
կը նետէր²⁶:

Սելճուքները այդ փայտաշէն բարանը
քաղաքին դիմաց կանգնեցուցին, եւ որ-
պէսզի հայ քահանային մեքենայէն ար-
ձակուած քարերն անոր վնաս չհասցնեն,
առջեւը բամպակէ լաթերէ եւ ուրիշ նիւ-
թերէ պատնէշ մը շինեցին²⁷: Երբ թշնա-
մին սկսաւ բարանով սաստիկ ուժգին քար-

կոծել բերդին պարիսպը, քարերու ահա-
գին կտորներ նետելով, Մանազկերտ սար-
սափեցաւ: Այդ սարսափն իր գաղաթնա-
կէտին հասաւ, երբ քարերէն մէկը «թըն-
դացուց բոլոր քաղաքը եւ պարսպին մէկ
կողմը փլցուց»²⁸: Թէեւ հնարամիտ քա-
հանան զործիք մը հնարելով՝ բարանին
զօրութիւնը տկարացուց, բայց Տուղրիլ
Բէկ ալ զանազան հնարքներով բարանը
զօրացուց, այնպէս որ որեւէ մեքենայ
այլեւս անոր վնաս չէր կրնար հասցնել:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ԱԶԱՏՈՒՄԸ

Երբ Վասիլ իշխան տեսաւ թէ անհնար է
բարանին ուժգնութեան թափը կտրել,
իսկոյն զգաց թէ ինչպիսի սարսափելի
կացութեան պիտի մատնուի՝ եթէ մեքե-
նան այրելու հնարք մը չգտնուի: Այն լուր
չընցուց քաղաքին մէջ թէ «Ով որ կա-
րենայ դուրս ելլել եւ կրակ տալ բարա-
նին, այդպիսին ինծմէ պիտի ընդունի ոս-
կի, արծաթ, ձիերու եւ ջորիներու շատ
մը պարգեւներ. իսկ թաղաւորէն՝ փառք,
իշխանութիւն, եւ եթէ մեռնի՝ իր որդի-
ները զանոնք պիտի ստանան»²⁹:

Այն ժամանակ առաջ եկաւ քաջասիրտ
փրանկ մը եւ ըսաւ. «Ես ելից եւ այրեցից
զբարանն զայն, եւ ահա այսօր հեղից զա-
րիւն իմ ի վերայ ամենայն քրիստոնէից,
վասնզի ես միայն եմ եւ չունիմ կին կամ
զօրդի որ լան զիս»³⁰: Անիկա շինեց նաւթէ
ու ծծումբէ բաղադրուած զիւրավառ հե-
ղուկ մը, լեցուց երեք շիշերու մէջ, հա-
գաւ զրահ, ծածկուած հին զգեստներով,
զլուխը զրաւ սաղաւարտը, հեծաւ զօրա-
ւոր եւ սրաթուիչ ձիու մը վրայ եւ քաղա-
քէն դուրս ելաւ. ձեռքին մէջ բռներ էր
ողջունադրի կնքուած թուղթ մը, որպէս-
զի ամէն կասկած փարատէ: Հասնելով
թշնամի բանակը՝ ուղղուեցաւ բարանին
կողմը «Մանազքոռ, մանաքոռ» պո-

ռալով, այսինքն՝ պատգամաւոր կամ նա-
մակաբեր:

Կէս օրուան սաստիկ տաքին ժամանակն
էր երբ սելճուքներն իրենց վրաններուն
մէջ կը ննջէին, որովհետեւ առաւօտ եւ ե-
րեկոյ միայն կը կռուէին³¹: Առաջին պա-
հապանները զայն տեսնելով՝ կարծեցին
թէ քաղաքին կողմէ սուլթանին նամակ կը
բերէ, որովհետեւ անոնց ըսեր էր թէ նա-
մակաբեր եմ: Այսպէս անիկա խարեց
միամիտ սելճուքները, որոնք անհող կե-
ցած՝ թոյլ տուին որ քաջասիրտ եւ արի
փրանկը բարանին մօտենայ: Կանգ ա-
ռաւ եւ սկսաւ ուշադրութեամբ անոր նա-
յիլ, այն տպաւորութիւնը գործել տալով՝
թէ բարանին մեծութեան եւ շինուածքին
վրայ կը հիւսնայ: Բայց յանկարծ ծոցէն
չիշերը հանեց ու պատրաստուած հեղուկը
բարանին վրայ թափեց, ուսկից շուտ մը
ծիրանեզոյն բոց մը սկսաւ ելլել, որ
սաստկապէս վառեց այդ ահեղ մեքենան:
Ասոր վրայ անվահեր փրանկը ձին դար-
ձուց, սլացաւ եւ փախաւ ու անվնաս հա-
սաւ քաղաք:

Սելճուքները այդ տեսարանին առջեւ
յիմարեցան, ափշեցան, չէին գիտեր թէ
ինչ պիտի ընեն³²: Ոմանք ձիաւոր փրան-
կին ետեւէն ինկան, ուրիշներ փութացին
բարանին կրակը մարել. բայց ոչ մարդը
կրցան բռնել եւ ոչ կրակը մարել: Եւ այս-
պէս, քիչ ժամանակի մէջ, կրակն այն
փայտակերտ ըլլալը լափեց լմնուց:

Մանազկերտ զրկարաց ընդունեցաւ իր
աղատարարը, անոր տալով մեծամեծ
պարգեւներ: Իսկ Տուղրիլ Բէկ, ինչպէս
կ'ըսէ Ուռհայեցին, փրանկին կատարած
զործին վրայ հիացած, խնդրեց Վասիլ
իշխանէն՝ որ այդպիսի քաջութիւն գոր-
ծողն իրեն զրկէ, որպէսզի անոր պար-
գեւներ շնորհէ: Բայց փրանկը յանձն չա-
ռաւ երթալ³³:

Մինչ Մանազկերտ ցնծութեան մէջ թաղ-

21 Հմմտ. Զամէան, Պատմ. Վենետ. 1785 Բ, էջ 956:

22 Ա. Լաստիվերտցի, Պատմ. ԺԶ, էջ 69:

23 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 142:

24 Ա. Լաստիվերտցի, Պատմ. ԳԼ ԺԶ, էջ 68:

25 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 142:

26 Հմմտ. Ա. Լաստիվերտցի, Պատմ. ԳԼ ԺԶ, էջ 69:

27 Հմմտ. Ա. Լաստիվերտցի, անդ:

28 Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 143: Հմմտ. Ա. Լաստ. Պատմ. ԳԼ ԺԶ, էջ 69:

29 Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 143:

30 Հմմտ. Ուռհայեցի, անդ:

31 Հմմտ. Մ. Ուռհայեցի, Պատմ. Բ, էջ 144: Ա. Լաստ. ԳԼ ԺԶ, էջ 70:

32 Հմմտ. Մ. Ուռ. անդ: Ա. Լաստ. անդ:

33 Հմմտ. Մ. Ուռ. Պատմ. Բ, էջ 144-145:



